

*Այս դասի (դասի տեքստ + մտախնայող
ներածական տեսանյութ + բառարան +
ինքնաստուգիչ հարցեր + առաջադրանք)
յուրացման համար հարկավոր է մինչև
360 րոպե/6 ժամ:*

ԴԱՍ 5

ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹ

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ
(կարող եք գտնել հեռուստուցման փաթեթի կրիչում)

Այս դասի ընթացքում Դուք կծանոթանաք՝

- **խոսքի** այն որակներին, որոնք ասելիքը դարձնում են դյուրըմբռնելի ու տպավորիչ՝ վկայելով խոսողի տրամաբանական ու գեղագիտական ճաշակի, կրթամակարդակի, մասնագիտական խորը գիտելիքների ու հաղորդակցական հմտությունների մասին:

5.1. ԽՈՍՔԸ ՄՏՔԵՐԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏԵԼՈՒ ՄԻԶՈՑ Է, ԵՎ՝ ՈՉ ՄԻԱՅՆ

Խոսքի որակը նաև հեղինակի ինտելեկտի ցուցանիշ է, նրա գիտակցական ու հոգևոր որակների

- ՓԱՍՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՀՌԵՏՈՐԻԿԱ
- ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Ցուցումներ



Մինչև 15 րոպե

Ուշադրությամբ կարդացեք տեքստը (օգտվելով բառարանից) և այն յուրացնելուց հետո միայն անցեք հաջորդ մասերին /ինքնաստուգիչ հարցեր, առաջադրանք/:



Մինչև 120 րոպե

յուրօրինակ դրսևորում, «այցեքարտ», որը մշտապես անհատի տրամադրության տակ է:

Խոսքի մշակույթը կոնկրետ իրավիճակում այնպիսի լեզվական միջոցներ ընտրելու և գործածելու կարողությունն է, որը թույլ է տալիս ապահովել առավելագույն արդյունավետություն հաղորդակցման ընթացքում: Այլ կերպ ասած՝ խոսքի մշակույթը միտքն արտահայտելու համար առավել ճիշտ բառերի և տվյալ լեզվական համակարգին բնորոշ **քերականական (ձևաբանական, շարահյուսական)** կառույցների, տրամաբանական և ոճական միջոցների գործածման կարողությունն է:

Խոսքը կարող է լինել ինչպես ըմբռնելի, այնպես էլ՝ անըմբռնելի, ճիշտ կառուցված կամ անփույթ, տեղին կամ անտեղին, դիպուկ կամ ոչ դիպուկ, տրամաբանված և անտրամաբանական, հարուստ և աղքատ, ինքնատիպ և շտամպավորված (տրաֆարետային):

Ընդհանուր առմամբ խոսքի որակն էապես պայմանավորված է մտածողության որակով և ընդհակառակը:

Կարևոր է արդյոք խոսքի մշակույթը իրավաբանի համար: Անշուշտ՝ այո: Անկախ գործունեության բնույթից ու ոլորտից. օրինագծերի պատրաստում, թե հետաքննության իրականացում, պայմանագրերի մշակում, թե վճռի հրապարակում, մեղադրանքի, թե մեղադրյալի շահերի պաշտպանություն, գիտական հոդվածի պատրաստում, թե դրա ներկայացում՝ ամենուր իրավաբանը գործ ունի լեզվի, խոսքի ու հաղորդակցման երևույթների հետ: Ուստի, տվյալ լեզվին բնորոշ բառակազմական, շարահյուսական, արտասանության ձևերի պահպանումը հաղորդակցման արդյունավետությունը երաշխավորող մյուս որակների հետ միասին կարևոր նշանակություն ունի իրավաբանի մասնագիտական գործունեության ընթացքում:

• ՓԱՍՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՀՌԵՏՈՐԻԿԱ • ՀԵՌԱՌԻՍՈՒՑՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ



Առանձնացրեք խոսքի այլ տեսակներ ևս:



Իրավաբանը գործի բերումով շփվում է տարբեր մասնագիտությունների տեր ու տարբեր կրթամակարդակ ունեցող մարդկանց հետ: Նա պետք է կարողանա յուրաքանչյուր դեպքի համար ընտրել ճիշտ բառեր ու արտահայտություններ, համապատասխան տոն և ոճ, որոնք ոչ միայն լիարժեքորեն արտահայտում են միտքը, այլև թույլ են տալիս համոզիչ կերպով փաստարկել այն:

Իրավաբանի մասնագիտությունը պահանջում է ոչ միայն մասնագիտական վարպետություն, այլև բարձր ընդհանուր կրթամակարդակ: 20-րդ դարի նշանավոր ռուս իրավաբան, Ռուսաստանում դատախազական դպրոցի և փաստաբանության ավանդույթների հիմնադիրներից մեկի՝ Անատոլի Կոնիի խոսքերով՝ «*իրավաբանը պետք է լինի մարդ, ում ընդհանուր կրթությունը գնում է մասնագիտական կրթության առջևից*» [մեջբ. ըստ Ивакина 2007: 8]:

Հնարավոր չէ տիրապետել մասնագիտական լեզվին առանց մայրենիի լավ իմացության: Իրավաբանը պետք է ունենա հարուստ բառապաշար, փայլուն տիրապետի մայրենի լեզվի շարահյուսական, շարադասական նորմերին, բառակազմության սկզբունքներին ու արտասանության նրբություններին: Մայրենի լեզվի նկատմամբ «հոգատար ու հարգալից» վերաբերմունքը նաև քաղաքացիական որոշակի կեցվածքի, ազգային արժեքների նկատմամբ վերաբերմունքի ու հայրենասիրության արտահայտությունն է: «Դատախազության հնարներն ու խնդիրները» աշխատության մեջ Ա.Կոնին առանձնացնում է հրապարակային խոսքի արդյունավետությունը երաշխավորող երեք առաջնային պայման: Առաջինը խնդրո առարկայի ճշգրիտ և մանրամասն իմացությունն է: Երկրորդը՝ երևույթի դրական և բացասական կողմերի վերհանումը: Երրորդ պայմանը վերաբերում է խոսքի մշակույթին. «Պետք է իմանալ հարազատ լեզուն և կարողանալ օգտվել նրա ճկու-



նութունից, հարստութունից ու ինքնատիպ դարձվածքներից» [Кони А.Ф., Приемы и задачи прокуратуры. Пг., 1924]:

Պետք է իմանալ նաև, որ, ըստ *լեզվաբանական լրացության սկզբունքի*, միտքն արտահայտող բառերի (լեզվական թաղանթի) վերլուծությունը լրացուցիչ տեղեկություն է տալիս սուբյեկտի կողմից մտքի առարկայի ընկալման ու արժեքավորման, դրա նկատմամբ ենթագիտակցական վերաբերմունքի մասին (լեզվի և մտածողության կապի իրողությունը մեկնաբանող լեզվաբանական լրացության հայեցակարգն առաջարկել է Գ.Բրուսյանը) [տե՛ս Բրուսյան Գ.Ա., Փիլիսոփայություն և լեզու, Եր., 1972, էջ 117-144]:

Այնուհանդերձ, ամեն մի մասնագիտություն ունի իր յուրահատուկ լեզուն՝ մասնագիտական տերմինների ու արտահայտչամիջոցների համակարգն ու դրանց կիրառման կանոնները: Իրավունքի լեզվում կան բազմաթիվ մասնագիտական հասկացություններ, տերմիններ ու բառակապակցություններ, որոնք կարող են անծանոթ կամ դժվար ըմբռնելի լինել այլ մասնագիտությունների ներկայացուցիչների համար: Օրինակ՝ *հողված* - իրավական փաստաթղթի ամփոփ բաժին, պարագրաֆ, *դատվածության մարում* - դատվածության ժամկետի ավարտ, *բերման ենթարկել* - որևէ մեկին հարկադրաբար վարույթ իրականացնող մարմին տանել, *Էպիզոդ* - հանցավոր գործունեության հատված, մաս, *բարեխիղճ մոլորություն* - չկանխամտածված կերպով կատարված սխալ, *գործ հարուցել* - քրեական գործ կազմել: Թվարկումը կարելի է շարունակել. հանցավոր կապեր, խուլիգանական դրդումներ, հավատարմագրային կառավարում, անհայտ բացակայող, խափանման միջոց, պատշաճ կողմ, գործարք կնքել և այլն:

Անշուշտ, իրավաբանի խոսքն առանձնանում է սահմանված հասկացությունների ու ստանդարտ ար-



տասնադարյունների առատությամբ: Դրանց տեղին ու դիպուկ գործածումը ապահովում է մասնագիտական վերլուծությունների, տրվող գնահատականների ճշգրտությունն ու հիմնավորվածությունը: Սակայն դրանց չարաշահման և միայն դրանցով սահմանափակվելու պարագայում խոսքը կարող է ոչ միայն անհասկանալի լինել ոչ մասնագետ գրուցակիցների համար, այլև ձանձրացնել նրանց:

Գրավոր խոսքին, իհարկե, առավել բնորոշ է պատռոնական ոճը: Այստեղ ավելի շատ են հանդիպում մասնագիտական տերմիններն ու հասկացությունները: Իսկ բանավոր ելույթների դեպքում, որպես կանոն, կիրառվում է ավելի հարուստ բառապաշար, նաև գեղարվեստական արտահայտչամիջոցներ, կարևորվում են առոգանությունը, ձայնը, տեսողական կոնտակտը գրուցակիցների հետ, ժեստերը:

Գեղեցիկ, դիպուկ, մասնագիտորեն գրագետ շարադրված խոսքը բարձրացնում է խոսողի հեղինակությունը, նրա նկատմամբ վստահությունն ու հարգանքը: Հակառակ դեպքում տուժում են թե՛ խոսողի և թե՛ նրա կողմից ներկայացվող կառույցի հեղինակությունն ու վարկը:

Չի կարելի շփոթել ընկալումը ըմբռնման հետ, արվեստը արվեստագիտության հետ, գենդերը տենդերի հետ և այլն: Պետք է հնարավորինս խուսափել ոչ նորմատիվային (գրական լեզվի կանոններից շեղվող) խոսքի դրսևորումներից ու ժարգոնային արտահայտություններից (ինչպես օրինակ՝ «մեղադրյալը բլեֆ է անում», «տափածի մեկն է», «ղալա՛թ ես արել», «մուտիտ անել», «հոպ անել», «յուղ վառել» և այլն):

Գրագետ իրավաբանը չի ասի. *«Կարդայով գործը՝ ինձ մոտ, ընդհանրապես ասած, ոչ մի կասկածներ չմնաց, որ քաղ. Պետրոսյանի գործողություններում կա, այսպես ասած, հանցակազմ»*: Դժվար չէ նկատել

տվյալ նախադասության մեջ առկա ավելորդաբանությունները, անհարկի օտարաբանությունը, մտքի շարադրանքը բարդացնող դերբայական դարձվածք, ստորոգյալի և ենթակայի թվային անհամաձայնությունը: Այդ թերությունները բացասաբար են անդրադառնում խոսքի ընկալման վրա:

Նման դեպքերում լսողների մոտ առաջանում է բացասական ռեակցիա, անվստահություն էլույթ ունեցողի և նրա դրույթների նկատմամբ, հօդս է ցնդում իրավաբանի նկատմամբ հարգանքը, ձևավորվում է կասկած նրա մասնագիտական գիտելիքների վերաբերյալ:

Լեզվի քերականական նորմերի ու պահանջների հանգամանալից շարադրանքը դժվար չէ գտնել համապատասխան դասագրքերում, դրանց վերլուծությանն էլ կարելի է ծանոթանալ լեզվաբանական աշխատություններում:

Ուստի, այս դասի ընթացքում այդպիսի խնդիր չհետապնդելով, հաջորդիվ Ձեզ կներկայացնենք քերականական կանոններից զատ այն որակներն ու չափանիշները, որոնք ևս անհրաժեշտ են խոսքը տպավորիչ ու ազդեցիկ դարձնելու համար:

5.2 ՏՊԱՎՈՐԻՉ ԽՈՍՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԸ

• *Խոսքի առաջին անհրաժեշտ որակը պարզությունն ու հասկանալիությունն է:*

19-20-րդ դարերի իրավաբանական մտքի և դատական ճարտասանության երախտավորներից մեկը՝ Պյոտր Սերգեիչը (Պորոխովչիկով) խորհուրդ է տալիս «խոսել ոչ թե այնպես, որ Ձեզ կարողանա հասկանալ դատավորը, այլ այնպես, որ նա չկարողանա Ձեզ չհասկանալ» [Сергеич 1988: 35]:

շտկել ընդգծված դատությունը՝ օգտվելով դրան հաջորդող մեկնաբանությունից:





Խոսքի պարզությունը պայմանավորված է նյութի խորը իմացությամբ, ելույթի հստակ (ունկնդիրների համար ըմբռնելի) կառուցվածքով, շարադրանքի տրամաբանական կանոնավորությամբ, փաստարկների համոզականությամբ:

Երբեմն խոսքը խճճվում է դերբայական դարձվածների ոչ ճիշտ ձևակերպման կամ դրանք կիրառելի կարողանալու, **«խոտան» բառերի** (հաճախ կրկնվող, սակայն՝ անհարկի ու ավելորդ) գործածման պատճառով:

«1983 թ. Ռ.Տ.Յասենկովի առողջական վիճակը վատացավ, և որդին տեղափոխվեց հոր մոտ ապրելու, քանի որ ինքը խնամքի կարիք ուներ: 1983 թ. հունվարին Յասենկովը մահացավ, իսկ օգոստոսին նրան հաշվառեցին այդ բնակարանում»:

Ամենևին էլ պարզ չէ Ռ.Տ. Յասենկովը հա՞յրն է, թե՞ որդին, ո՞վ խնամքի կարիք ուներ, ո՞վ մահացավ՝ հա՞յրը, թե՞ որդին և ու՞մ գրանցեցին տվյալ բնակարանում: Մտքերի նման շարադրանքը հիշեցնում է մի հատված Ա. Չեխովի «Դու և Դուք» հուժմորային պատմվածքներից.

- Իսկ մեր միջամտության կարիք կա՞ր: Իր կինն է, ինքն էլ դաստիարակում է... Երբ երկուսը կռվում են, երրորդը չպետք է խառնվի... Աբրամկան սկսեց հանգստացնել նրան, որ գինետանն այլանդակություններ չանի, իսկ նա հարվածեց Աբրամկայի ականջին: Աբրամկայի աշխատողն էլ՝ նրան... Իսկ նա բռնեց նրան, բարձրացրեց ու գետնով տվեց... Այդ ժամանակ նա հեծավ նրան ու սկսեց մեջքին թմրկահարել... Մենք նրա ոտքերից քաշելով հանեցինք մյուսի տակից:

- Ո՞վ ու՞մ:
- Պարզ է՝ ում... Ում վրա հեծել էր:
- Ո՞վ:
- Դե հենց նա, ում մասին պատմում են:





• *Տպավորիչ խոսքի հաջորդ կարևոր որակը ճշգրտությունն է:*

Պետք է առանձնացնել ճշգրտության երկու տեսանկյուններ՝ *բովանդակային* և *լեզվական*: *Բովանդակային ճշգրտությունը* ցույց է տալիս, թե միտքը որքանով է ճիշտ արտացոլում (ներկայացնում, բնութագրում) իրականությունը, տվյալ երևույթը: *Լեզվական ճշգրտությունը* ցույց է տալիս, թե որքանով են խոսքը, ընտրված բառերն ու արտահայտչամիջոցները ճիշտ արտացոլում միտքը: Այս երկու բաղադրիչներն էլ խիստ կարևոր են խոսքի ճշգրտությունն ապահովելու առումով:

Պետք է հստակ տարբերակել ու չփոթել, օրինակ, հասկացություն և հասկացողություն, բավարար և բավական, իրազեկություն և իրավասություն, արժանանալ և ստանալ, ընկալում և ըմբռնում, զգայություն և զգացողություն հասկացությունները: Ստորև Ձեզ ենք ներկայացնում մի աղյուսակ՝ բառերի ու հասկացությունների սխալ և ճիշտ գործածման օրինակներով:

Աղյուսակ 1. Բառերի ու հասկացությունների սխալ և ճիշտ գործածման օրինակներ

Սխալ տարբերակ	Ճիշտ տարբերակ
Ազատ հայրենիքի <i>հասկացողությունը</i> մշտապես առաջնորդել է հայդուկներին:	Ազատ հայրենիքի <i>գաղափարը</i> (այսինքն՝ <i>հասկացությունը</i>) մշտապես առաջնորդել է հայդուկներին:
Նրա կինը <i>բավարար</i> գեղեցիկ է:	Նրա կինը <i>բավականին</i> գեղեցիկ է:
Երկրում բավականին բարձր է <i>հանցագործության</i> մակարդակը:	Երկրում բավականին բարձր է <i>հանցավորության</i> մակարդակը:

Փորձեք ձևակերպել այլ օրինակներ ևս:



Տուժողը մեղադրյալի կողմից արժանացել է մարմնական վնասվածքների:	Մեղադրյալը տուժողին պատճառել է մարմնական վնասվածքներ:
Այդ հարցերը չեն մտնում մեր կազմակերպության իրազեկության շրջանակների մեջ:	Այդ հարցերը չեն մտնում մեր կազմակերպության իրավասության շրջանակների մեջ:
Մտանց որևէ պատճառի, խուլիգանական մղումներով նա վիրավորել է տուժողներին:	Խուլիգանական դրդումներով նա վիրավորել է տուժողներին:

• *Խոսքի մյուս արժեքավոր որակը տեղին լինելն է: Այսինքն՝ համապատասխանությունը սահմանված նպատակին, թեմային, խնդիրներին, իրավիճակին, ժամանակին, ձևավորված ֆիզիկական կամ տրամաբանական համատեքստին:*

Միշտ չէ, որ գեղարվեստորեն համեմված խոսքը տեղին է ու արդյունավետ: Փաստաբանն իր պաշտպանյալի ստացած վնասվածքների մասին դատարանում խոսելիս չպետք է ասի, թե նա «ստացել է ահավոր վերքեր»: Տվյալ դեպքում նախընտրելի է իրավական բառամթերքում կիրառվող «ծանր մարմնական վնասվածքներ» արտահայտությունը:

Չի կարելի նաև խոսքը գեղարվեստորեն պճնել, երբ այն վերաբերում է, օրինակ, մահացածի դիակի դատարժշկական զննության արդյունքներին: Այն տանը, որտեղ սուգ կա, տեղին չէ «բարի օր» կամ «բարով տեսանք» ողջույնը. ի սկզբանե նախընտրելի է ցավակցական խոսքը: Լուրջ չի ընկալվի և տարատեսակ կատակների տեղիք կարող է տալ փաստաբանի խոսքը, եթե նա ասի. «Իմ վստահորդը տասը տարի ամուսնացած է եղել, սակայն մի գեղեցիկ օր նրա ամուսինը քամու տարած հարդի նման թռավ-կորավ



Ռուսաստանի անձայրածիր հեռուներում»: Առավել նախընտրելի է իրավական հասկացություններով ու տերմիններով ձևակերպել միտքը, և դրանից հետո միայն ներկայացնել լքված կնոջ կարեկցանքի արժանի վիճակն ու խոսքի հուզական ներգործությունն ավելացնող հնարներ գործածելով գնահատել նրա ամուսնու անպատասխանատու վարքը:

• *Խոսքի արժանիքներն ավելացնող կարևոր որակներից մեկն էլ մարքոլոյունն է՝ գերծ լինելը բարբառային դրվագներից, ժարգոնային արտահայտություններից, **խոտան բառերից**, սխալ շեշտադրումներից, «ը-ը-ը»-երից ու «ա-ա-ա»-երից:*

Իրավաբանի խոսքում ժարգոնային արտահայտությունների (ինչպես օրինակ՝ *տժժալ* - գվարճանալ, *գցել* - խաբել, ուրիշի ունեցվածքը յուրացնել, *խոխմա* - հուճոր, կատակ) անցանկալիության մասին արդեն խոսել ենք: Դրանք, ինչպես նաև բարբառային դրվագները տեղին կարող են լինել միայն ուրիշների խոսքից բառացի մեջբերումներ ու վկայակոչումներ անելու դեպքում:

Նույնքան անցանկալի է նաև մտածելու, բառը մտաբերելու նպատակով խոսքի ակամա դադարները «ը՛-ը՛-ը՛»-երով ու «ա՛-ա՛-ա՛»-երով լրացնելու սովորույթը: Այդպիսի դեպքերում, ինչպես Պ.Մերգեիչն է արտահայտվում, լսարանում նստած մարդկանց «ականջները թառամում են», իսկ նյարդերը՝ ձգվում: Ավելի նախընտրելի է պարզապես լուռ խորհելն ու մտածելը, քան դադարն անիմաստ ձայնարկություններով լցնելը:

Բավականին հաճախ են հանդիպում տարատեսակ *ավելորդարանություններն* ու **խոտան արտահայտությունները**, որոնք ևս ունակ են փչացնել խոսքից ու ելույթից ստացած տպավորությունը:



Փորձեք վերհիշել խոսքը
երկարացնող Ձեր
սովորությունները:

Դրանք պետք է դիտարկել որպես վատ սովորություն,
երբ խոսողը հաճախակի և միանգամայն անտեղի
կրկնում է տվյալ արտահայտությունը: Օրինակ.
«Հայաստանի Երրորդ Հանրապետության Սահմա-
նադրությունը, հա՞, ընդունվել է 1995 թվականին: Եվ,
ինչպես հայտնի է, հա՞, այն բարեփոխվել է 2005 թվա-
կանին: Այժմ, հասկանում եք, խոսքը գնում է նոր, հա՞,
փոփոխությունների մասին»: Տվյալ դրվագում «հա՞»-
երի և «ինչպես հասկանում եք»-ների փոխարեն կարող
էին լինել «չէ՞»-եր, «ուրեմն»-ներ, դրանից գործի էու-
թյունը չէր փոխվի: Դրանք ավելորդ, խոսքն անհարկի
ձգձգող, բովանդակային առումով ոչինչ չասող և տպա-
վորությունը փչացնող արտահայտություններ են:

Խոտան բառերի կապակցությամբ տեղին է հիշել
մի հին անեկդոտ: Տերտերին հացի են հրավիրում: Իսկ
տերտերը, որ շատ էր ձգտում մյուսներից առանձ-
նանալ իր «հարուստ» բառուբանով, յուրահատուկ
խոսելաոճով, արձագանքում է՝ «Նամանավանդ ձիս
կապեն, գամ»:

• *Խոսքի ամենակարևոր արժանիքներից մեկն էլ
**լակոնիկությունն է՝ հակիրճ ու սեղմ, միաժամանակ
ամփոփ լինելը: Ինչպես հայտնի ասացվածքն է ասում՝
«Հակիրճությունը տաղանդի քույրն է»:***

Ոմանք կարծում են, թե լակոնիկությունն ապա-
հովվում է կարճ արտահայտությունների ու նախա-
դասությունների միջոցով, քանզի դրանք հեշտ են
հիշվում: Սակայն հայտնի է, որ բազմաթիվ լավագույն
փաստաբաններ գործածում են շարահյուսական բարդ
կառույցներ՝ դերբայական դարձվածներով ու մակբայ-
ներով, նախադասության համասեռ ու ստորադաս
անդամներով: Բայց եթե հոետորները խոսում են ըստ
էության, ապա այդ միջոցները նպաստում են խոսքի
վարպետության դրսևորմանը:



Ընդհանուր առմամբ, օրենսդրությունը ծավալային և ժամանակային սահմանափակումներ չի նախատեսում դատական ելույթների համար: Սակայն կարևոր է գիտակցել, որ անհարկի երկարաշունչ, ծամծմված ու ձանձրացնող ելույթները լուրջ արդյունքներ խոստանալ չեն կարող:

Խոսքի լակոնիկությունը հիմնականում ձեռք է բերվում մտքերի ճշգրիտ արտահայտման, հստակ ձևակերպման, բովանդակային ծանրաբեռնվածություն չունեցող բառեր չգործածելու, շատախոսության և ավելորդ արտահայտությունների բացառման շնորհիվ:

Բավականին տարածված թերություն է շատախոսությունը, ավելորդ բառերի ու հոմանիշների կիրառությունը: Օրինակ՝ «Մեղադրյալը գտնվելիս է եղել այլոհողի ազդեցության տակ, սաստիկ հարբած ու անսթափ վիճակում», «Բնակարանի դուռը կողպեքով, պատշաճ կերպով, բոլոր հնարավոր եղանակներով փակ էր»:



Շատախոսության հաճախակի հանդիպող տարատեսակ է *սլլեռնագմբ* (հուն․՝ ավելորդություն)՝ ավելորդաբանության այն տարբերակը, երբ բառակապակցության մեջ իրար հաջորդող բառերն իմաստային առումով կրկնում են միմյանց: Պլեռնագմբ պարունակող արտահայտություններ են. «տեղափոխվել ապրելու հյուրանոցում» (բավական է ասել՝ տեղափոխվել հյուրանոց), «ոտքով քայլել» (բավական է ասել՝ քայլել), «հարյուր դրամ փող», (պարզ է, որ հարյուր դրամն այլ բան լինել չի կարող, քան՝ փող, ուստի, «հարյուր դրամ» բառակապակցությունն այլևս հավելման կարիք չունի), «Քսան հոգի մարդ էր հավաքվել» (այստեղ էլ ավելորդ է «մարդը»), «Հավաքվենք, մի հատ տեսնենք՝ ինչ ենք որոշում» («մի հատ» բառակապակցությունն ավելորդ է): Նույնպիսի սխալ են պարունակում «առաջին պրեմիերա», «մթնոլորտային օդ», «ետ վերադառնալ», «Հայաստան ներկրել արտասահմանից», «ինքնախոստովանական ցուցմունք», «ցա-



մաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական ներմուծման դեմ արձանագրություն» (այդպես է կոչվում Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը /ընդունվել է 15.11.2015թ./) բառակապակցությունները:

Անհրաժեշտ է նկատել նաև, որ որոշ պլեոնազմներ, շարունակ գործածվելով, ամրագրվել, կարծրացել են լեզվական համակարգում և սխալ չեն համարվում, օրինակ՝ «**իջնել ներքև**», «**վեր բարձրանալ**»: Երբեմն էլ դիտարկվող սկզբունքով կառուցված բառակապակցությունը նպատակ ունի կարևորել ու ընդգծել հիմնական հասկացության բովանդակության կամ ծավալի այս կամ այն բաղադրիչը, ուստի որոշ դեպքերում արդարացված է նաև այդպիսի պլեոնազմների կիրառությունը: Օրինակ՝ «մասնակցային ժողովրդավարություն», «կանանց իրավունքներ և ազատություններ», «արվեստի և կինոյի պատմություն», «հոետորիկայի և դատական ճարտասանության պատմություն»:

Խոսքի ընթացքում հանդիպող ավելորդաբանությունների շարքին են դասվում նաև *լեզվական կրկնաբանությունները*: Դրանք, ի տարբերություն ապացուցման և սահմանման ընթացքում հանդիպող կրկնաբանությունների, բովանդակային սխալ չեն պարունակում, սակայն լեզվաոճական անցանկալի թերություններ են: Օրինակ՝ «Ես միջնորդում եմ ամբաստանյալի պատժաչափը սահմանել ՀՀ Քրեական օրենսգրքի 178 հոդվածի առաջին մասով, և այդ հոդվածով առաջնորդվելիս սահմանել պատժի նվազագույն չափ»: Ճիշտ կլինի միտքը ձևակերպել հետևյալ կերպ. «Միջնորդում եմ ամբաստանյալին մեղավոր ճանաչել ՀՀ Քրեական օրենսգրքի 178 հոդվածի առաջին մասով և դատապարտել կալանքի 15 օր ժամկետով»:

• *Խոսքն ավելի տպավորիչ ու ազդեցիկ է, երբ լակոնիկությունը համադրվում է խորը և լսարանի*

Փորձեք ձևակերպել այլ օրինակներ ևս:



հուղական աշխարհի վրա ներգործող բովանդակության հետ: Այդպիսի արդյունքի հասնելու համար խոսքը պետք է օժտված լինի *արտահայտչական* (Էքսպրեսիվություն /Expressivitas՝ արտահայտում/) և *հուղական որակներով:* Այդ որակները պայմանավորված են հոետորի մտածողության ինքնատիպությամբ, իր դրույթների ճշմարտացիության և արդարացիության մեջ համոզվածությամբ և իր համոզմունքը վառ ու պատկերավոր խոսքի միջոցով գրուցակիցներին փոխանցելու կարողությամբ:

Սակայն խոսքի հուղական ու արտահայտչական որակները ևս պետք է լինեն չափի մեջ: Դրանք արդյունավետ ու տեղին են այն դեպքում, երբ ծառայում են ելույթի բովանդակությունն ավելի համոզիչ դարձնելուն, մտքի առավել կարևոր դրվագներն ընդգծելուն, դրանց վրա դատավորների, մեղադրյալի, դատաքննության մյուս մասնակիցների ուշադրությունը բևեռելուն: Հակառակ դեպքում, երբ պերճախոսական հնարները (այդ թվում նաև ձայնը, դիմախաղը, ժեստերը) համադրված չեն պատշաճ բովանդակությամբ և կրում են ավելի շատ ձևական բնույթ, կարող են ունենալ հակառակ ազդեցություն՝ առաջ բերելով ունկնդիրների տարակուսանքը, քամահարական ժպիտն ու դժգոհությունը:

• *Տպավորիչ ու ազդեցիկ խոսքի կարևոր որակ է* ինքնատիպությունը: Անշուշտ, իրավաբանական տերմինաբանությանն ու դարձվածքներին տիրապետելը իրավաբանի պարտականությունն է և վկայում է նրա մասնագիտական պատրաստվածության մասին: Սակայն իրավաբանի խոսքն էլ ավելի հասկանալի ու տպավորիչ է, երբ այդ ամենի հետ միասին նա կարողանում է նաև առավել լայն լսարանին մատչելի եղանակով ներկայացնել խնդիրը, ինքնատիպ համեմատությունների ու վերլուծության միջոցով բացահայտել հարցի էությունը: Այդպիսի դեպքերում ասում

ենք, որ գործ ունենք ուրույն «ձեռագրով», մտածելակերպով ու խոսքի ոճով առանձնացող անհատականության հետ:

Ուսանող պրակտիկանտները, ովքեր հաճախակի են լինում դատարանում, կարող են նկատել որևէ դատավորի, փաստաբանի կամ դատախազի կողմից հաճախ կրկնվող արտահայտություններ. «հիմա անցնեմ ամբաստանյալի անձին», «հիմա անցնեմ հանցագործության բնութագրմանն ու որակավորմանը», կամ էլ՝ «իմ խնդիրն է նպաստել տվյալ քրեական գործի հանգամանալից ու համակողմանի դիտարկմանը և արդարացի, օրինական ու հիմնավորված վճռի կայացմանը»: Երբեմն էլ տարբեր գործերի վերաբերյալ ելույթ ունենալիս տվյալ փաստաբանը (դատավորը, դատախազը) կրկնում է մի քիչ փոփոխված նույն ճառը: Մինչդեռ անհատականության կնիք ունեցող, փաստերի մատուցման ու վերլուծության ինքնատիպությամբ առանձնացող խոսքն է, որ կարող է իրապես գրավել, ու տպավորություն գործել լսարանի վրա:

• *Տպավորիչ խոսքի վերջին անհրաժեշտ որակը, որն այս դասի շրջանակներում հարկ ենք համարում կարևորել, բառապաշարի հարստությունն է, արտահայտչամիջոցների բազմազանությունը: Դրանք ավելի գունեղ ու պատկերավոր են դարձնում ասելիքը:*

Բառապաշարը հարստացնելու համար լավ միջոց է գեղարվեստական գրականության ընթերցումը: Հատկանշական է, որ նշանավոր դատական ճարտասանները պրակտիկ գործունեությունը համատեղել են իրավագիտական և գրական ու գրականագիտական գործունեության հետ:

Բառապաշարը հարստացնելու մյուս արդյունավետ միջոցը *հոմանիշների և բացատրական բառարանների ընթերցումն է: Վերջապես, լավ միջոց է նաև հոմանիշների ու հականիշների շարքեր կազմելու, համանուն-*

ների հետ գործառնություններ պահանջող վարժությունների կատարումը [տե՛ս, օրինակ, Հայոց լեզվի վարժությունների և առաջադրանքների շտեմարան 2014]:

Այսպիսով, այս դասի ընթացքում Դուք ուսումնասիրեցիք իրավաբանի համար խոսքի մշակույթի կարևորությունը հիմնավորող փաստարկները, խոսքի և մտքի փոխադարձ կապի երևույթը: Ծանոթացաք խոսքի որակն ապահովող կարևոր պահանջներին՝ պարզություն, դիպուկություն, մաքրություն, լակոնիկություն, արտահայտչականություն, ինքնատիպություն, որոնք առաջնային չափանիշներ են խոսքը տպավորիչ ու ազդեցիկ դարձնելու առումով:

Իսկ խոսքը գեղեցկացնող, դրա տրամաբանական, պատկերային ու հուզական ներգործությունն ավելացնող *պերճախոսական հնարների* ընտրանուն կծանոթանաք հաջորդ երկու դասերի ընթացքում:

